ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՕՐԵՆՔ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանը հին քաղաքակրթության երկիր է։ Նրա բնիկները մարդկային հասարակության արշալույսից ի վեր ապրել են այստեղ և աչքի ընկնող հետքեր թողել երկրի զարգացման հաջորդական բոլոր դարաշրջաններում։

Ուրարտուի անկումից հետո՝ մ. թ. ա. VI—IV դարերում, իր ավարտին է հասնում հայ ժողովրդի կազմավորումը, և հայկական ցեղերի ու ցեղախմբերի դարավոր, բայց մինչ այդ տեղական անջատ-անջատ մշակույթների և ուրարտականի ժառանգության հիման վրա ձևավորվում է վաղ հայկական մշակույթը, իր նյութական հուշարձաններով, երգերով, առասպելներով։ Հայաստանը մեկն է այն երկրներից, որոնք ոչ միայն հաղորդակից դարձան անտիկ աշխարհի ժառանգությանը, այլև սեփական հողի վրա զարգացրին հելլենիստական գծեր ստացած, բայց ինքնատիպ ու ինքնուրույն իրենց մշակույթը։

Ֆեոդալական հասարակության ժամանակաշրջանում Հայաստանը, արաբական և բյուզանդական քաղաքակրթություններին համաքայլ, անցնելով վայրէջքի և վերելքի, անկման ու ծաղկման մի քանի փուլերով, սեփական ժողովրդի ջանքերով և շինարար ձեռքերով ստեղծել է նյութական և հոգևոր մշակույթի բազմաթիվ կոթողներ։

Հայ ժողովուրդը շատ բան է պահպանել այդ դանձերից, մեզ հասցնելով մի մեծ ժառանգություն, որն աչքի է ընկնում ոչ միայն ինքնուրույնությամբ, այլև արևելքի ու արևմուտքի մեծ քաղաքակրթությունների հետ ունեցած իր բազում կապերով ու աղերսներով։ Ուստի, այն ունի ընդհանուր պատմագիտական, ճանաչողական նշանակություն, և պատահական չէ, որ նրանով հետաքրքրվում ու զբաղվում են թե՛ արևելքում և թե՛ արևմուտքում։

Հայ մշակույթի շատ գործիչներ անցյալ դարի վերջերին և դարիս սկզբներին, լավ ճանաչելով Հայաստանի հուշարձանների արժեքն ու նշանակությունը, մեծ վշտով են արձանագրել նրանց անմիջիջար վիճակը, քայքայումն ու կործանումը՝ ժամանակի և մարդկանց ավերիչ ներգործությամբ։

Սովետական կարգերի հաստատումը՝ հայկական պետության ստեղծումը, բացառիկ մեծ նշանակության պատմական եղելություն էր ամբողջ հայ ժողովրդի բախտի, նաև մշակութային կյանքի համար։

Սովետական իշխանության առաջին իսկ օրերին մշակութային հուշարձանները հռչակվեցին համաժողովրդական սեփականություն և վերցվեցին պետական հոգատարության ու պահպանության ներքո։ Դեռևս 1923 թ. ստեղծվեց հատուկ պետական մարմին՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեին առընթեր Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն։

Հուշարձանների պահպանության գործը գլխավորեցին կամ իրենց եռանդուն ջանքերով դրան մեծապես օժանդակեցին հայ մշակույթի մի շարք ականավոր գործիչներ՝ Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Թամանյանը, Թորոս Ռոբամանյանը, Հովսեփ Օրբելին և ուրիշներ։

Հաշվի առնվեցին երկրով մեկ սփռված հուշարձանները, կազմվեցին պահպանության ենթակա հուշարձանների ցուցակները, տրվեց առաջին օգնությունը կործանման ենթակա հինավուրց շինություններին։ Մշակույթի գանձերը պահպանելու, ուսումնասիրելու և ժողովրդին ներկայացնելու համար ստեղծվեցին պետական և գավառական թանգարաններ։ Մատենագրական ձեռագիր գրավոր ժառանգության պահպանության և ուսումնասիրության գործը կատարում է մեր Մատենադարանը։ Անցած տարիների ընթացքում վերանորոգվել և կործանումից փրկվել են շուրջ 150 առանձին կամ խմբային հուշարձաններ, կատարվել են 4000 չափագրական գծագրեր, 140 հուշարձանի գեոդեզիական հանույթներ, մեծ թվով լուսանկարահանումներ և այլն։ Հանրապետության մայրաքաղաք Երևանում և այլ քաղաքներում ու վայրերում կառուցվեցին ճարտարապետական նոր բարձրարվեստ շենքեր, կանգնեցվեցին նոր հուշարձաններ՝ նվիրված պատմական եղելություններին, հեղափոխական գործիչներին՝ մեծ Լենինին, Շահումյանին և նրանց զինակիցներին, մշակույթի ականավոր վարպետներին, հիմնվեցին գրողների տուն-թանգարաններ, կառուցվեցին 1915 թ. Մեծ եղեռնի, 1918 թ. Սարդարապատի բախտորոշ ճակատամարտի հուշար-

ձանները, կանգնեցվեցին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձաններ։ Հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի գանձարանը մեծապես հարստացավ նոր տիպի և նոր բովանդակության հարյուրավոր կոթողներով։

Հուշարձանների պահպանության պետական և հասարակական լայն մասշտաբներով կատարված դրական աշխատանքի կողքին կան նաև խոշոր թերություններ։ Աշխատավորների դեպուտատների քաղաքային, ավանային և գյուղական սովետները, որոնց վրա է դրված հուշարձանների պահպանությունը, նկատելիորեն թուլացրել էին իրենց աշխատանքներն այդ ուղղությամբ; տեղական որոշ սովետներ անգամ մոռացության էին մատնել այդ պարտականությունները։ Հուշարձանների պահպանությունը հանրապետության մասշտաբով գլխավորող պետական մարմնի՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի շինարարության պետական կոմիտեի հուշարձանների բաժնի և հուշարձանների վերանորոգումները իրականացնող շինարարական տեղամասի կառուցվածքը և հնարավորությունները չէին համապատասխանում նրանց առջև կանգնած խնդիրների նշանակությանը և ծավալին, անբավարար էր հուշարձանների հսկողությունը, թուլացել էր հասարակական հոգատարությունը այդ գործում։

Այս ամենը ունեցան անցանկալի հետևանքներ, եղան հուշարձանների ավերման դեպքեր, հայտնվեցին հանցագործ գանձախույզներ, որոնք փորփրում էին հուշարձանները, վնաս պատճառում նրանց։ Անբավարար էին պեղումներով բացված հուշարձանների վերանորոգման, ամրացման և պահպանման աշխատանքները, անուշադրության էր մատնված հանրապետությունում ծավալված շինարարական մեծ աշխատանքների ժամանակ երևան եկող հուշարձանների ուսումնասիրության և պահպանության գործը, դեռևս անհրաժեշտ ծավալի աշխատանքներ չէին կատարվում հուշարձանների բարեկարգման ուղղությամբ, առանձին դեպքերում նրանց շուրջը կամ նրանց կից ապօրինի կերպով կառուցվում էին նոր շենքեր և այլն։

Հուշարձանների պահպանության գործում առաջացած նոր խնդիրները և նկատվող թերությունները չէին կարող չմտահոգել հասարակայնությանը և պահանջում էին պետական ու հասարակական խոշոր ծավալի և վճռական միջոցառումների իրականացում։

Հասարակական կարգի ամենախոշոր միջոցառումը եղավ հուշարձանների պահպանության հայկական կամավոր ընկերության ստեղծումը 1965 թ., որի անհատական անդամների թիվն այժմ անցնում է 90 հազարից, իսկ կոլեկտիվ անդամների թիվը՝ 2000-ից։ Ընկերությունը բոլոր քաղաքներում և շրջաններում ստեղծել է իր կազմակերպությունները, շրջանային խորհուրդները, հանրապետական խորհուրդը և նրա վարչությունը, իր անդամների միջոցով կատարում է մաքրման և հասարակական հսկողության աշխատանքներ, իսկ անդամավճարներից ստացվող գումարները հատկացնում է հուշարձանների պահպանման և վերանորոգման նպատակին։

1967 և 1968 թթ. վերջերին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը և Մինիստրների սովետը քննության առան հուշարձանների պահպանության վիճակը և իրականացրին այդ ուղղությամբ տարվող աշխատանքների բարելավման մի շարք միջոցառումներ. աշխատավորների դեպուտատների տեղական սովետները աշխուժացրին իրենց աշխատանքը հուշարձանների պահպանության ուղղությամբ, վերակազմվեց և կազմակերպչորեն ամրապնդվեց հուշարձանների պահպանության պետական մարմինը՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի շինարարության պետական կոմիտեի հուշարձանների պահպանության բաժինը, որը վերածվեց վարչության, իսկ հուշարձանների վերանորոգման շինարարական տեղամասը՝ հուշարձանների վերականգնման գիտարեստավրացիոն արվեստանոցի։ Համապատասխանաբար ընդարձակվեցին նրանց աշխատակիցների կազմը, ֆինանսական և տեխնիկական հնարավորությունները։

Մինիստրների սովետի որոշմամբ մեծ ծավալի աշխատանքներ կատարվեցին Էրեբունի—Երևանի 2750-ամյակի կապակցությամբ, ինչպես Էրեբունի ուրարտական քաղաքի միջնաբերդում և նրա շուրջը, նույնպես և ուրարտական Թեյշեբաինի քաղաքի և միջնաբերդի սահմաններում, հնագույն բնակավայր Շենգավիթում, Ավանում և այլուր։ Հիմնադրվեց «Էրեբունի» թանգարանը, տեղական թանգարան ստեղծվեց Շենգավիթում, բարեկարգվեցին մի շարք հուշարձաններ։

Պետական լայն ծավալի միջոցառումների այդ շարքում հատուկ տեղ է գրավում հուշարձանների պահպանության վիճակի քննարկումը Հայկական ՍՍՀ յոթերորդ գումարման Գերագույն սովետի հինգերորդ նստաշրջանում, որը տեղի ունեցավ 1969 թ. հուլիսի 17-ին և ընդունեց կուլտուրայի հուշարձանների պահպանության վերաբերյալ հատուկ օրենք (օրենքի տեքստը հրապարակված է «Սովետական Հայաստան» թերթի 1969 թ. հուլիսի 18-ի համարում)։ Հարցի քննարկումը նստաշրջանում և ընդունված

օրենքը նշանավորում են հուշարձանների պահպանության նոր փուլը և անդրադարձնում են այդ բնագավառում հանրապետության առջև ծառացած ավելի ծավալուն խնդիրներն ու միջոցառումները։

Օրենքի առաջին հոդվածը հռչակում է, որ մշակութային բոլոր տեսակի հուշարձանները գտնվում են պետական հաշվառման և պահպանության ներքո։ Միաժամանակ օրենքը ընդգծում է, որ հուշարձանների պահպանությունն ու նրանց նկատմամբ հոգատարությունը հասարակական կազմակերպությունների, կոլեկտիվների և յուրաքանչյուր քաղաքացու պատվավոր պարտականությունն է։ Այստեղ իր դրսևորումն է գտնում հուշարձանների նկատմամբ պետական և հասարակական հոգատարության երկու սկզբունքների ներդաշնակ միասնությունը։

Օրենքում հուշարձանները դիտված են լայն ընդգրկումով և բաժանված 5 խմբի՝ ճարտարապետական, հնագիտական, պատմական (ժամանակակից պատմական-հեղափոխական), արվեստի և գրական հուշարձաններ։ Առաջին և երկրորդ խմբի հուշարձանների պահպանության կազմակերպումը, ղեկավարությունը և վերահսկողությունը հանրապետական մասշտաբով դրվում են ՀՍՍՀ Մինիստրների սովետի շինարարության պետական կոմիտեի վրա, իսկ երրորդ, չորրորդ և հինգերորդ խմբի հուշարձաններինը՝ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության վրա։ Հին ձեռագրերի պահպանության և ուսումնասիրության գործը դրվում է հին ձեռագրերի ուսումնասիրության գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի վրա։ Թանգարանային արժեքների պահպանությունը վերապահվում է համապատասխանաբար պետական այն մարմիններին, որոնց իրավասությանը ենթակա են այդ թանգարանները։

Օրենքը սահմանում է, որ առանձին հուշարձաններ կամ դրանց խմբերը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից արգելավայրեր հայտարարվելու դեպքում պահպանվում են կառավարության հաստատած հատուկ կանոնադրությամբ։ Այդ նշանակում է, որ նման հուշարձանների կամ նրանց խմբերի պահպանությունը, բարեկարգումը, վերականգնումը, մասսայականացումը դառնում են կառավարության որոշմամբ իրականացվող հատուկ միջոցառումների և հոգատարության առարկա։ Նման լայն ծավալի աշխատանքներ այժմ սկսված են Դառնիում, որտեղ վերականգնվում է I դ. հեթանոսական տաճարը։

Օրենքը պարտավորեցնում է հողային, մելիորատիվ, շինարարական և այլ գործեր կատարող հիմնարկներին՝ հուշարձաններ բացվելու դեպքում անհապաղ դադարեցնել աշխատանքը, հայտնել շինարարության պետական կոմիտեին, կուլտուրայի մինիստրությանը կամ գիտությունների ակադեմիային՝ ուսումնասիրության և պահպանման անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու համար, որից հետո միայն աշխատանքը կարող է շարունակվել՝ Մինիստրների սովետի շինարարության պետական կոմիտեի թույլտվությամբ։ Հուշարձանների քանդումը, ձևափոխումը, տեղափոխությունը կարող են կատարվել միայն Մինիստրների սովետի հատուկ թույլտվությամբ՝ շինարարական աշխատանքներ կատարող հիմնարկ-ձեռնարկությունների հաշվին։ Հիմնարկ-ձեռնարկությունների հաշվեկշռում գտնվող հուշարձանների պահպանությունը իրականացնում են տվյալ հիմնարկ-ձեռնարկությունները՝ հուշարձանների պահպանության հանրապետական մարմինների վերահսկողությամբ։

Օրենքը պարտավորեցնում է հնագիտական հուշարձանները պեղող հիմնարկներին՝ պեղումների սկզբից մինչև ավարտը ապահովել ուսումնասիրվող հուշարձանների պահպանությունը, իսկ պեղումների ընթացքում բացված ճարտարապետական հուշարձանների վերականգնումը պետք է իրականացնի Մինիստրների սովետի շինարարության պետական կոմիտեն։

Օրենքը աշխատավորների դեպուտատների քաղաքային, ավանային և գյուղական սովետների գործադիր կոմիտեներին և հուշարձանների պահպանության հանրապետական մարմիններին պարտավորեցնում է սերտորեն գործակցել հուշարձանների պահպանության հայկական կամավոր ընկերության և մյուս հասարակական կազմակերպությունների հետ, հուշարձանների պահպանության նկատմամբ սահմանել մշտական պետական և հասարակական վերահսկողություն և իրականացնել հուշարձանների պահպանության ու բարեկարգման շեֆական աշխատանքներ։ Օրենքը նախատեսում է նաև հուշարձանների շուրջը տարվող մասսայական ծավալուն աշխատանքների իրականացումը համապատասխան հաստատությունների, կազմակերպությունների բանավոր պրոպագանդայի, մասսայական հրատարակությունների, մամուլի, կինոյի, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանում 1969 թ. հուլիսի 17-ին ընդունված օրենքը շրջադարձային նշանակություն կունենա հայ ժողովրդի մշակութային մեծ ժառանգության պահպանության, ուսումնասիրության և մասսայականացման մեծ ու պատվավոր գործում։

Պրոֆ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ